ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ԱԺԱՐՈՅՑԻԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 37 - 38 (16233) ՈՒՐԲԱԹ, 9 ՄԱՅԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

Ֆաշիզմի դեմ Հաղթանակի 69-րդ տարելիցի առթիվ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհավորական ուղերձով դիմել է պատերազմի վետերաններին:

Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Ցանկանում եմ նշել, որ մենք հպարտանում ենք ձեզանով, ֆաշիզմի դեմ ձեր անձնազոհ եւ հերոսական պայքարով: Ձեր հոգեկան կարծրությունն ու դիմացկայնությունը, ձեր անձնազոհությունն ու արիությունը, անկախ ժամանակի վաղեմությունից, օրինակելի կլինի բոլորի համար:

Հավատում եմ, որ հաջորդ սերունդներն էլ կհիշեն մայիսի 9-ը եւ կհպարտանան նրանով, որ երկրորդ համաշխարհային պատերազմում վրացիները մյուս ազգերի հետ միասին մարդկությանը փրկեցին ֆաշիզմից:

Խորին հարգանքով շնորհակալություն եմ հայտնում հայրենիքին ցուցաբերած ձեր ծառայության, արժանապատվորեն կատարած պարտքի համար: Առողջություն եւ երկարակեցություն Ձեզ, թանկագի՛ն վետերաններ»:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՆՔՆ Է ԸՆՏՐԵԼՈՒ, ՎԵՐԱՇՍԿԵԼՈՒ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԱՅՍ ԵՐԿԻՐԸ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հունիսի 15-ին նախատեսված տեղական ինքնակառավարման ընտրությունների կապակցությամբ, շրջայց է անցկացնում երկրի տարածաշրջաններում: Շրջայցի շրջանակներում վարչապետը եղավ Քութայիսիում, որտեղ հանդիպում ունեցավ տեղի բնակիչների հետ:

Վարչապետի խոսքերով, հունիսի 15-ից Վրաստանի համար սկսվում է բացարձակապես նոր փուլ: «Հունիսի 15-ին մենք անցկացնելու ենք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը: Դա իրականում քաղաքական կարեւոր նշանակության իրադարձություն է երկրի համար: Ընտրությունները բացառիկ են նաեւ նրանում, որ ժողովրդին առաջին անգամ տրվում է տեղական իշխանության անմիջական ընտրության, ապա ընտրյալներին վերահսկելու հնարավորություն: Մենք ընտրելու ենք 12 քաղաքների քաղաքապետերի,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մայիսի 5-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հրավերով, Թբիլիսի ժամանեցին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Նախագահների եռօրյա այցի շրջանակներում անցկացվեց «Թբիլիսյան գագաթաժողով-2014» եռակողմ հանդիպումը: Գագաթաժողովի օրակարգում տարածաշրջանում իրականացվելիք համատեղ տնտեսական նախագծերի իրականացումն է:

Գագաթաժողովը բացեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Իրենց ելույթներում Թուրքիայի եւ Արդբեջանի նախագահներն առանձնակի ընդգծեցին տնտեսական համատեղ նախագ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայի կրոնական գործերով վարչության ղեկավար, պրոֆեսոր Մեհմեդ Գորդեզի հրավերով Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը պաշտոնական այցով գտնվում է Անկարայում:

Այցի շրջանակներում կայացած հանդիպումներում քննարկվել են կրոնի ազատության, կրոնա-մշակութային հուշարձանների վերանորոգման եւ շինարարության հարցերը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՐՑՈՒՄ

Ո՞ՒՄ ՕԳՏԻՆ ԿՔՎԵԱՐԿԻ ԸՆՏՐՈՂԸ

NDI
NATIONAL DEMOCRATIC INSTITUTE FOR INTERNATIONAL AFFAIRS

Անցնող շաբաթ Միացյալ Նահանգների Ազգային ժողովրդավարական ինստիտուտն (NDI) անցկացրեց իր կողմից անցկացված հարցման արդյունքների շնորհանդեսը:

Այն որոշակիորեն հնարավորություն է ընձեռում որոշելու, թե տեղական ինքնակառավարման ընտրություններում քա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ 69-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ, ՍԻՐԵԼԻ՝ ՎԵՏԵՐԱՆՆԵՐ

Այսօր՝ մայիսի 9-ին, առաջադեմ ողջ մարդկությունը նշում է ֆաշիզմի դեմ հաղթանակի 69-րդ տարելիցը: Եվ այսօր մենք ցանկանում ենք հիշել բոլոր նրանց, ովքեր կռեցին հաղթանակը, ովքեր, առանց տատանման զոհեցին իրենց կյանքը, ովքեր ապագա սերունդներին փրկեցին ֆաշիստական ստրկությունից:

Պատերազմին Վրաստանից մասնակցեց 700 հազար մարդ (այն ժամանակվա բնակչության 19 տոկոսը), որոնցից 300 հազարը զոհվեց մարտի դաշտում:

Ընդհանուր առմամբ, պատերազմի չորս տարիների ընթացքում Խորհրդային Միության զինված ուժերի կորուստները կազմեցին շուրջ 27 միլիոն, իսկ խաղաղ բնակչության հետ միասին զոհերի թիվը կազմեց 41 միլիոն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇՈՒՄ Է ԵՌԱՏՈՆԸ

Մայիսի 9-ին, Հայրենական Մեծ պատերազմի 69-րդ տարեդարձի, Շուշիի ազատագրման եւ Արցախի Պաշտպանության բանակի օրվա կապակցությամբ, այսօր Երեւանում, Հայաստանի տարբեր քաղաքներում, Արցախում կանցկացվեն մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հաղթանակի Եռատոնին:

400 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

Հաղթանակի տոնի առթիվ Վրաստանի կառավարությունը սահմանել է միանշանակ դրամական օգնություն:

Ինչպես տեղեկացրին առողջապահության նախարարությունից, պատերազմի մասնակիցներին կտրվի 400, իսկ կերակրողին կորցրածներին՝ 200 լարիի դրամական օգնություն:

Վրաստանի ողջ տարածքում (բացառությամբ Թբիլիսիի) միանշանակ սոցիալական օգնության հանձնումը ապահովելու է սոցիալական սպասարկումների գործակալությունը, իսկ մայրաքաղաքում՝ Թբիլիսիի քաղաքապետարանը: Պատերազմի վետերաններն ու կերակրողին կորցրածները մայիսի 6-ից արդեն կարող են «Լիբերթի» բանկից ստանալ հասանելիք գումարները:

ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Հաղթանակի 69-րդ տարելիցի առթիվ, շնորհավորական ուղերձով դիմել է Վրաստանի պատերազմի վետարաններին:

Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Թանկագի՛ն վետերաններ, Վրաստանի հարգելի՛ քաղաքացիներ: Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ մեծ Հաղթանակի 69-րդ տարելիցի առթիվ: Դաժան, արյունահեղ պատերազմում հարազատ հողն ու ապագա սերունդների համար խաղաղության պահպանման համար մեր հայրերի ու պապերի անմահ սխրանքը Ռուսաստանի եւ Վրաստանի ընդհանուր պատմության հերոսական անմոռանալի էջն է:

Այսօր հոգեւոր եւ մշակութային մերձեցման, ավանդական բարեկամության եւ փոխըմբռնման բազմադարյա կապերը մեր երկրների միջեւ բարիդրացիական հարաբերությունների վերականգնման կարեւորագույն երաշխիքն են: Մենք անկեղծորեն միտված ենք նրան, որպեսզի արգասաբեր զարգանան նորանոր գործերով, գաղափարներով եւ ծրագրերով հարստանան ռուս-վրացական կապերը: Այս տոնական օրը Մեծ Հայրենականի վրաց վետերաններին մաղթում եմ առողջություն եւ բարեկեցություն, Վրաստանի բոլոր քաղաքացիներին խաղաղություն եւ բարօրություն:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհավորել է Հովիկ Աբրահամյանին՝ Հայաստանի կառավարության ղեկավարի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Իր շնորհավորական ուղերձում Վրաստանի վարչապետը հույս է հայտնել, որ վարչապետի կարգավիճակում Հովիկ Աբրահամյանը էլ ավելի կնպաստի երկու երկրների միջեւ համագործակցության խորացման ու ընդլայնման գործին:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին Հայաստանի Ազգային ժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ շնորհավորական նամակ է հղել Գալուստ Սահակյանին:

Նամակում, նոր պաշտոնում արգասաբեր աշխատանքի բարեմաղթանքի հետ միասին, Դավիթ Ուսուփաշվիլին հույս է հայտնել, որ Գալուստ Սահակյանի հետ միասին կկարողանան նշանակալիորեն ամրապնդել վրաց-հայկական խորհրդարանական եւ միջպետական կապերը, կանխագծել դրանց զարգացման հեռանկարները:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծերի իրականացման անհրաժեշտությունը:

Նախագահներն անդրադարձան նաեւ տարածաշրջանում Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների հնարավոր ազդեցությունների հարցին:

Հանրագումարելով «Թբիլիսյան գագաթաժողով-2014» եռակողմ հանդիպման արդյունքները, Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ համատեղ մամլո ասուլիսում Գիգորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ որքան շատ երկրներ միանան տարածաշրջանային նախագծերին, այնքան բարձր կլինի կայունության մակարդակը:

Նշեց, որ իրենք մտադիր են տարածաշրջանային նախագծերում ընդգրկել նոր երկրներ: «Մենք ընդլայնում ենք համագործակցությունը Եվրոպայի եւ Ասիայի երկրների հետ, որպեսզի ավելի շատ երկրներ կարողանան օգտվել սերտ համագործակցության բարիքներից»,- ընդգծեց Վրաստանի նախագահը:

Մայիսի 6-ին, Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահների գագաթաժողովի շրջանակներում, անցկացվեց նաեւ վրաց եւ թուրք գործարարների բիզնես համաժողովը:

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թուրքական կողմը հանդիպումներում բարձրացրեց Բաթումիի Ազիզե եւ Ախալցիխեի Ահմեդա մզկիթների հարցը: Ընդգծվեց, որ Իշխանի եւ Օշխի վրացական եկեղեցիների վերանորոգման հարցով ստորագրած համաձայնագրում վրացական կողմից նախատեսվում էր մզկիթների ծավալուն շինարարություն:

Իր հերթին, վրաց Պատրիարքը նշեց, որ Վրաստանի մահմեդական բնակիչներն ունեն իրենց դավանանքին հետեւելու բոլոր պայմանները, ինչի վկայությունն է Վրաստանում 311 մզկիթների գործունեությունը: Վրաց Ուղղափառ եկեղեցու ղեկավարի խոսքերով, Թուրքիայի տարածքում չկա ոչ մի վրաց գործող եկեղեցի: Միաժամանակ, Սրբազնագույնը պահանջեց, որպեսզի վրաց մասնագետներին ու գիտնականներին ներգրավեն Իշխանի եւ Օշխի եկեղեցիների վերանորոգման աշխատանքներում:

Միաժամանակ, Պատրիարքը հույս հայտնեց, որ Թուրքիայի իշխանությունների կողմից 2011 թվականին ընդունած որոշումը, որը նախատեսում է 1936 թվականին կրոնական փոքրամասնություններին հասցրած նյութական վնասի փոխհատուցում, տարածվի նաեւ վրացական ուղղափառ համայնքի վրա:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը, նախարար Իրակլի Ալասանիայի գլխավորությամբ, աշխատանքային այցով գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այցի շրջանակներում Իրակլի Ալասանիան հանդիպում ունեցավ ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի, պաշտպանության նախարար Չակ Հեյգելի, ԱՄՆ սենատորներ Ջոն Մակքեյնի եւ Ջեյմս Ինխոփի, կոնգրեսականներ Մայք Թերների եւ Մայք Մաքլոմի հետ:

Հանդիպումներում քննարկվել են վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության հետ առնչվող հարցեր: Օրակարգում ընդգրկվել էին նաեւ տարածաշրջանային անվտանգության, ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման, ալյանսի հետ ռազմական համագործակցության ընդլայնման հարցերը: ԱՄՆ պաշտպանության նախարարի հետ հանդիպման գլխավոր թեման Ուկրաինայում ստեղծված իրավիճակն է: Դրա ենթատեքստում ընդգծվեց միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտությունը:

Ամերիկյան կողմը շնորհակալություն հայտնեց միջազգային ուժերի շրջանակներում Վրաստանի զինված ուժերի գործունեության կապակցությամբ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրել է երկրի խորհրդարանի կողմից մայիսի 2-ին ընդունված խտրականության դեմ օրենքը: Փաստաթուղթը արդեն հրապարակվել է երկրի «Օրենսդրական լրատու»-ում եւ, հետեւաբար, մտել է ուժի մեջ:

Փաստաթղթի համաձայն՝ երկրում արգելվում է խտրականությունը ցանկացած հատկանիշով: Մասնավորապես, օրենքի նպատակը մարդկանց իրավահավասարության սկզբունքների պահպանումն է՝ անկախ նրանց ռասայից, մաշկի գույնից, սեռից, քաղաքացիությունից, դավանանքից, ընտանեկան դրությունից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, քաղաքական հայացքներից եւ այլն:

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը բացասական գնահատական տվեց Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունած հակախտրականության օրենքին: Սուրբ Գիորգիի տոնի առթիվ մատուցած պատարագում Իլիա Երկրորդը հայտարարեց, որ «անօրինականության օրինականացումը մեծ մեղք է»: «Վրաստանն այնպիսի երկիր է, որտեղ երբեք ոչ մեկին չեն հալածել: Դա այնպիսի երկիր է, որտեղ բոլորն իրենց ազատ են զգացել»,- նշեց նա: «Ես պարտավոր եմ ասել, որ ոչ մի հավատացյալ նման օրենք չի ընդունի: Կանցնի ժամանակ, եւ մենք ինքներս կզարմանանք, թե ինչպես ընդունվեց այդ օրենքը»,- հայտարարեց Իլիա Երկրորդը:

Արձագանքելով Պատրիարքի քննադատական ելույթին, Վրաստանի էներգետիկայի նախարար, փոխվարչապետ Կախի Կալաձեն հայտարարեց, որ խորհրդարանը կարողացավ հասնել նրան, որ սույն հարցով դիմակայությունը նվազեց: «Պատրիարքը բոլորիս համար հարգված անձնավորություն է, հետեւաբար ես դժվարանում եմ կոնկրետ հայտարարություն կատարել, թեպետ պետք է նշեմ, որ խորհրդարանը կարողացավ սույն հարցով նվազ դիմակայության հասնել եւ, միաժամանակ պաշտպանել բոլորի իրավունքները»,- հայտարարեց Կախի Կալաձեն:

ՀԱՐՑՈՒՄ

Ո՞ՒՄ ՕԳՏԻՆ ԿՔՎԵԱՐԿԻ ԸՆՏՐՈՂԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղաքական ո՞ր ուժերը կարող են նշանակալի հաջողության հասնել: Մասնագետների մի մասը գտնում է, որ ներկայացված տվյալները համապատասխանում են իրականությանը, իսկ ոմանք քննադատում են ինստիտուտի հարցման մեթոդիկան եւ գտնում, որ դրանց արդյունքները վստահության արժանի չեն:

Ինչ վերաբերում է հարցման արդյունքներին, ապա հարցման ենթարկվածների մեծ մասը շարունակում է գտնել, որ Բիձինա Իվանիշվիլին հանդիսանում է այն անձնավորությունը, որի խոսքը վճռական նշանակություն ունի գործող իշխանության համար: Նվազել է այն մարդկանց թիվը, ովքեր գտնում են, որ երկրում ժողովրդավարության մակարդակը բարձրացել է: Հարցման ենթարկվածների մեծ մասի կարծիքով, խորհրդարանական ընտրություններից հետո անցած ժամանակահատվածում քրեածին իրավիճակը չի փոխվել: Չի ավելացել նաեւ այն մարդկանց թիվը, ովքեր գտնում են, որ անցած ժամանակահատվածում իրենց ընտանիքի սոցիալական վիճակում փոփոխություն չի եղել, թեպետ հարցման ենթարկվածների 19 տոկոսն այն համարում է ավելի վատթարացված, իսկ 13 տոկոսը՝ բարելավված:

Հարցման ենթարկվածների մոտ կեսը գտնում է, որ իշխանությունների կողմից կատարվող բարեփոխումները կարեւոր նշանակություն ունեն:

Ինստիտուտի կողմից անցկացված հարցումը թույլ է տալիս որոշակիորեն կանխագծել հունիսի 15-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրությունների մոտավոր արդյունքներով: Ելնելով վերոնշյալ տվյալներից, առաջիկա ընտրություններում «Վրացական երազանքը» կարող է ստանալ ընտրողների 55 տոկոսի աջակցությունը: «Միասնական ազգային շարժումը» հնարավոր է արժանանա ընտրողների 22 տոկոսի աջակցությանը, իսկ մնացած ձայները, ամենայն հավանականությամբ, կբաժանվեն ոչ խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնող կուսակցությունների միջեւ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՈՒԿՐԱԻՆԱ

ՍՏԱՑՎԵՑ ՎԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ

Ուկրաինան ստացել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) երկամյա վարկային ծրագրի ավելի քան 3 մլրդ դոլարի չափով առաջին մասնաբաժինը:

Ինչպես ավելի վաղ հաղորդվել էր, ԱՄՀ-ի տնօրենների խորհուրդը մայիսի սկզբին Ուկրաինայի համար հաստատել է նոր հակաճգնաժամային ծրագիր, որը առաջիկա երկու տարվա ընթացքում Կիեւին մոտավորապես 17 մլրդ դոլարի չափով վարկային աջակցության հատկացման հնարավորություն է նախատեսում:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՕԴԵՍԱՅՈՒՄ

«Սեւ ուրբաթ»՝ ուկրաինական մամուլը հենց այսպես է անվանում մայիսի 2-ին Ուկրաինայի Օդեսա քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները: Արհմիությունների շենքում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով զոհերի թիվը հասել է 46-ի, վիրավորներինը՝ գերազանցում է 200-ը:

Ուրբաթ երեկոյան Օդեսայի Հունական թաղամասում տեղի է ունեցել բախում մի կողմից՝ «Անտիմայդանի» ու մյուս կողմից՝ «Եվրամայդանի» ակտիվիստների եւ Օդեսայի ու Խարկովի ֆուտբոլային ակումբների երկրպագուների միջեւ: Գիշերը անկարգությունները շարունակվել են:

Օդեսայում կատարվածն ավելի է սրել իրավիճակն արդեն պառակտված Ուկրաինայում:

ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎԱԿՈԽԵՑԻՆ ԱԿՏԻՎ ՓՈՒԼ

Ուկրաինայի արեւելքում մայիսի 5-ին վերսկսվել է հանրապետության ուժայինների պատժիչ գործողության ակտիվ փուլը: Այս մասին հայտնել է Ուկրաինայի անվտանգության ծառայության մամուլի ծառայության ղեկավար Մարինա Օստապենկոն:

Ավելի վաղ հայտարարվել էր, որ Սլավյանսկում (Դոնեցկի մարզ) մարտ է ընթանում ուկրաինական հատուկ ստորաբաժանումների եւ տեղի աշխարհազորայինների միջեւ:

ԶՈՐՔԵՐԻ ՀԵՏՔԱՇՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈ՞ՒՄ Է, ԹԵ՞ ՈՉ

Մայիսի 7-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ամփոփելով ԵԱՀԿ-ի գործող նախագահ, Շվեյցարիայի նախագահ Դիդիե Բուրկհալտերի հետ Մոսկվայում կայացած հանդիպման արդյունքները, հայտարարել է. «Մեզ շարունակ ասում էին, որ անհանգստացած են Ուկրաինայի սահմանների մոտ մեր զորքերի ներկայությունից: Մենք դրանք հետ ենք քաշել, նրանք այսօր գտնվում են ոչ թե Ուկրաինայի սահմանին, այլ այն վայրերում, որտեղ անցկացնում են իրենց կանոնավոր վարժանքները՝ զորափորձարաններում»:

Պուտինը նաեւ կոչ է արել ուղղակի լիարժեք երկխոսություն հաստատել Կիեւի ներկայիս իշխանությունների եւ Ուկրաինայի հարավ-արեւելքի բնակիչների միջեւ: Նրա խոսքով՝ Ռուսաստանը խնդրում է ֆեդերալացման կողմնակիցներին հետաձգել մայիսի 11-ին նշանակված հանրաքվեն, որպեսզի հնարավոր լինի լիարժեք պայմաններ ստեղծել դրա անցկացման համար:

Իր հերթին ՆԱՏՕ-ի եւ Պենտագոնի պաշտոնական ներկայացուցիչները չեն հաստատում Ուկրաինայի սահմաններից ռուսական զորքերի հետքաշման վերաբերյալ ՌԴ-ի նախագահ Վլադիմիր Պուտինի արած հայտարարությունը: «Մենք ոչ մի տվյալ չունենք այն բանի վերաբերյալ, որ Ուկրաինայի սահմանի երկայնքով զորքերի դիրքերը փոխվել են»,- ասել է Հյուսիսատլանտյան դաշինքի ներկայացուցիչը: ՆԱՏՕ-ի տվյալներով՝ վերջին շաբաթներին սահմանային շրջանում է գտնվում ռուսական զորքերի 40-հազարանոց խմբավորումը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՐՑՆ Է

Մայիսի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ճգնաժամերի հաղթահարման ծառայության Եվրոպայի արտաքին գործողությունների դեպարտամենտի ղեկավար Ագոստինո Միոցիի հետ:

Ինչպես նշվեց հանդիպմանը, Եվրամիության գործողությունների համակարգման եւ ճգնաժամային իրավիճակների հաղթահարման դեպարտամենտը կարեւորագույն դեր է խաղում անվտանգության քաղաքականության մեջ, որպես մարմին իրականացնում է համընդհանուր մոնիտորինգ եւ շուրջօրյա պայմանակարգով ապահովում տեղեկատվության տարածումը: Եվրամիության ճգնաժամերի հաղթահարման համակարգը կարգավորում է այն հետեւանքները, որոնք ծագում են քաղաքական կամ ռազմական հակամարտությունների, տեխնոլոգիական միջադեպերի, տեխնոգենային եւ բնական աղետների ժամանակ:

Հանդիպմանը նշվեց, որ վերոնշյալ դեպարտամենտի հետ համագործակցությունը մեծ օգնություն կցուցաբերի Վրաստանի ճգնաժամային իրավիճակների կարգավորման տեսանկյունից:

ՎՐԱՍՏԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄՆ Է

Մայիսի 7-ին աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ուիլյամ Հեյգը:

Իր վրաց գործընկերոջ Մայա Փանջիկիձեի հետ հանդիպմանը, նախարարները քննարկեցին Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի արագացման հարցը: Ինչպես հայտարարեց Ուիլյամ Հեյգը, Մեծ Բրիտանիան լրիվությամբ աջակցում է այդ գործընթացին եւ հանդիսանում է ասոցիացման համաձայնագրի ավելի վաղ ժամկետներում ստորագրման նախաձեռնողը:

Մեծ Բրիտանիան պաշտպանում է նաեւ Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը:

Իր հերթին, Մայա Փանջիկիձեն նշեց, որ Վրաստանը նպատակամղվածորեն ընթանում է Եվրոպայի կողմը եւ այդ ընթացքին ոչինչ խանգարել չի կարող: «Մենք գնահատում ենք Մեծ Բրիտանիայի աջակցությունը, որը աշխարհի կարեւորագույն երկրներից մեկն է եւ նշանակալի ավանդ է ներդնում միջազգային անվտանգության գործում»,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարարը:

ՕՄԲՈՒԴՍՄԵՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին ներկայացրեց հակամարտությունների արդյունքում տուժյալների իրավական վիճակի մասին հաշվետվությունը:

Ինչպես հայտարարեց ժողովրդական պաշտպանը, խոսքը վերաբերում է բռնազավթված տարածքներից բռնագաղթվածների մասին օրենքին, ինչպես նաեւ 2013 թվականին անցկացված փախստականների նոր գրանցմանը:

«2013 թվականին նկատվեցին դրական միտումներ, կապված նոր քաղաքականության մշակման հետ, մասնավորապես, օրենքի փոփոխությունների, ժողովրդական պաշտպանի գրասենյակի ու քաղաքացիական հասարակության սերտ համագործակցությամբ ընթացող գործընթացների հետ: Ինչ վերաբերում է հիմնախնդիրներին, ապա դրանք նույնն են: Նախ, դա փախստականների զանգվածային բնակության անտանելի պայմաններն են:

Առանձնակի հատկանշական է բաժանման գծի երկայնքով ստեղծված իրավիճակը: Մենք առանձնակի ուշադրություն ենք հատկացրել սահմանամերձ գյուղերին եւ դրանցում ստեղծված իրավիճակին»,- հայտարարեց Ուչա Նանուաշվիլին:

Ուչա Նանուաշվիլին առաջնահերթային է համարում երկրում գենդերային իրավահավասարության ու կանանց իրավունքների հարցը: Նրա հավաստմամբ, ահազանգերի մեծ մասը վերաբերում է ընտանեկան բռնության թեմային:

Ինչպես ընդգծեց ժողովրդական պաշտպանը, անհրաժեշտ է կիրարկել միայնակ մայրերի օգնության պետական ծրագիրը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐՈՊԱՅԻ ՇԱԲԱԹ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մայիսի 5-ին Թբիլիսիում, ի նշանավորումն Եվրոպայի օրվա, մեկնարկեցին Եվրոպայի շաբաթին նվիրված միջոցառումները:

Շաբաթվա անցկացմանը աջակցում են եվրոպական ու եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերով պետնախարարի աշխատակազմը եւ ՆԱՏՕ-ի ու Եվրամիության վերաբերյալ տեղեկատվական կենտրոնը:

Շաբաթը բացեց «Մեր եվրոպական ընտրությունը» խորհրդաժողովը, որը դարձավ Եվրամիության թեմայով ավելի վաղ հայտարարված էսսեի մրցույթի եւ Թբիլիսիի պետական գեղարվեստական ակադեմիայում կայացած մրցույթի եզրափակիչ փուլը: Միջոցառումը բացեցին եվրոպական ու եվրատլանտյան կառույցներին ինտեգրվելու հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին եւ Վրաստանում ԵՄ-ի դեսպան Ֆիլիպ Դիմիտրովը: Շաբաթվա շրջանակներում, Եվրամիության հետ համագործակցությանը եւ ԵՄ-ի հետ ասոցիացման համաձայնագրին վերաբերող հարցերի շուրջ ուսանողների եւ փորձագետների մասնակցությամբ անցկացվեցին բանավեճեր:

Եվրոպայի շաբաթը կտեւի մինչեւ մայիսի 14-ը: Հանդիպումներ են պլանավորված ուսանողների, ակադեմիական շրջանների ներկայացուցիչների, ֆերմերների հետ: Բացի այդ, Թբիլիսիում եւ տարածաշրջաններում կկազմակերպվեն սպորտային մրցաշարեր ու ցուցահանդեսներ:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՑԵՐՈՐԴՆ Է

Հայաստանը 6-րդ տեղն է զբաղեցրել Վրաստանի հիմնական առեւտրական գործընկերների թվում: 2014 թվականի հունվար-մարտին Վրաստանի հետ Հայաստանի արտաքին առեւտրական շրջանառությունը կազմել է 122,4 մլն դոլար: Այդ մասին հայտնել են Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունում՝ «Սակստատ»-ում:

Ռուսաստանն այդ ցուցակում զբաղեցնում է երրորդ տեղը: Նշված ժամանակահատվածում ՌԴ-ի հետ Վրաստանի առեւտրաշրջանառությունը կազմել է ավելի քան 190,3 մլն դոլար՝ հանրապետության ամբողջ արտաքին առեւտրաշրջանառության 7,5 տոկոսը: 2013 թվականի համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ, երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունն աճել է 57 տոկոսով:

Ռուսաստանն առաջնությունը զիջում է Թուրքիային, որի հետ Վրաստանի առեւտրաշրջանառությունը կազմել է 368 մլն 430,1 հազար դոլար (Վրաստանի ամբողջ արտաքին առեւտրաշրջանառության 14 տոկոսը), եւ Ադրբեջանին, որը երկրորդ տեղն է զբաղեցնում Վրաստանի հիմնական առեւտրական գործընկերների շարքում (մոտավորապես 320 մլն դոլար՝ ամբողջ արտաքին առեւտրաշրջանառության 12,7 տոկոսը):

Առաջին տասնյակում են նաեւ Ուկրաինան (168 մլն դոլար, 6,7 տոկոս), Չինաստանը (166 մլն դոլար, 6,6 տոկոս), Գերմանիան (116 մլն դոլար, 4,6 տոկոս), ԱՄՆ-ը (մոտավորապես 109 մլն դոլար, 4,3 տոկոս), Բուլղարիան (89,2 մլն դոլար, 3,5 տոկոս), Ռումինիան (79,2 մլն դոլար, 3,1 տոկոս): Ընդամենը Վրաստանի արտաքին առեւտրաշրջանառությունը 2014 թվականի հունվար-մարտին կազմել է 2 մլրդ 523 մլն դոլար (առանց չկազմակերպված առեւտրի հաշվառման), ինչը 18 տոկոսով ավելի է 2013 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշից:



ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ ԿԱՐՏԵԼԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ

«ՎԵՐՍԻԱ»

«ՎԵՐՍԻԱ»: Վրաստանի դեղագործական շուկայի մոտ 24 տոկոսը զբաղեցնում է «PSP» ընկերությունը, իսկ 23 տոկոսը՝ «Ավերսիան»: Երկրի մասշտաբով «PSP»-ն տնօրինում է 170 դեղատների, իսկ «Ավերսիի» ենթակայության տակ կա մոտ 240 դեղատուն: Նրանք մրցակիցներ են, սակայն ճշգրտված տվյալների համաձայն, այդ երկու ընկերությունները գործընկերներ են: Այսպես, «Մեդիակապիտալ» ՍՊԸ-ի բաժնետոմսերի 50 տոկոսը պատկանում է «Ավերսիին», իսկ մյուս 50 տոկոսը՝ «PSP» ընկերությանը: Դա մրցակից ընկերությունների միջեւ կարտելային գործարքի դասական օրինակ է, ինչը պետք է համարվի ազատ առեւտրի եւ մրցակցության օրենքի խախտում:

ՀԱՄԱԿՈՎԿԱՍՅԱՆ ԳԵՅ-ՇՔԵ՞ՐԹ

ԱԽԱԼԻ ԹԱՌԲԱ

«ԱԽԱԼԻ ԹԱՌԲԱ»: Ինչպես հայտարարել է կովկասյան հարցերով փորձագետ Մամուկա Արեշիձեն, ոչ կառավարական կազմակերպություններից մեկը մայիսի 17-ին ծրագրում է Թբիլիսիում ակցիա: «Նրանք մտադիր են Կովկասի տարբեր երկրներից հրավիրել հոմոսեքսուալիստներին եւ անցկացնել համակովկասյան գեյ-շքերթ: Այդ ամենը ծառայում են մի նպատակի՝ տվյալ կազմակերպությունը ցանկանում է ստանալ գրանտ, իսկ դա կտրվի միայն ակցիայի կազմակերպման դեպքում: Գրանտը հանձնում է եվրոպական միջազգային կազմակերպություններից մեկը եւ, անհրաժեշտության դեպքում, դժվար չէ պարզել, թե որ կազմակերպությունների մասին է խոսքը»,- նշել է Արեշիձեն:

ԳՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԿԱՃԵՆ

Rombsblin

«ՌԵԶՈՆԱՆՍԻ»: Տեղական ինքնակառավարման ընտրություններից առաջ պարենամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների գները վերադարձան 2012 թվականի հոկտեմբերի մակարդակին: Վերջին տարիների ընթացքում մեծ դժվարություններով նվազեցված գները կրկին աճեցին: Առանձին մթերքների գները գերազանցեցին նաեւ 2012 թվականի հոկտեմբերի ցուցանիշը: Թանկացել են միսը, կարտոֆիլը, պանիրը, հիգիենայի միջոցներն ու վառելանյութը: Փորձագետները դա առնչում են որոշ գործոնների հետ, այդ թվում՝ լարիի արժեզրկման եւ ներկրումից երկրի կախվածության հետ:

ԼԱՐԻՆ ԱՐԺԵԶՐԿՎՈՒՄ Է

«ՌԵԶՈՆԱՆՍԻ»: Լարին կրկին սկսել է արժեզրկվել: Այն արժեզրկվում է ոչ միայն ԱՄՆ դոլարի, այլեւ եվրոյի նկատմամբ:

Լարիի հավասարակշռությունը պահպանելու մասին կառավարության խոստումը չհամապատասխանեց իրականությանը: Ինչպես նշեց երիտասարդ տնտեսագետների ասոցիացիայի ներկայացուցիչ Գիորգի Ցիմինթիան, ազգային տարադրամի արժեզրկումը կախված է շրջանառության մեջ լարիի ծավալի արհեստական ավելացման հետ: Նա բացառում է լարիի ամրապնդումը, հիմնավորելով, որ նախարարությունն արտաքին վարկը բարձր տոկոսով փոխել է եւ ստացել բյուջեի համար լրացուցիչ եկամուտ:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՆՔՆ Է ԸՆՏՐԵԼՈՒ, ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԱՅՍ ԵՐԿԻՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մունիցիպալիտետների վարչության նախագահների եւ մեծամասնական պատգամավորների, եւ դա բացարձակապես նոր փուլ է Վրաստանի համար: «Վրացական երազանքը» քաղաքական այն ուժն է, որը կամավոր իրականացնում է բարեփոխումները, որոնք նախատեսում են ժողովրդին իշխանության իրատեսական փոխանցումը: Մենք այն կհասցնենք մինչեւ վերջ: Ժամանակն է, որ մեր ժողովուրդն ստանձնի պատասխանատվությունը եւ ընտրի իր ցանկալի կառավարիչներին: Ժողովուրդն ինքն է վերահսկելու նրանց, կառավարելու է երկիրը»,- բնակիչների հետ հանդիպմանը հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ԸՆՏՐԱԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հունիսի 15-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արդեն ավարտել է քաղաքական կուսակցությունների գրանցման գործընթացը:

Վերջնական տվյալներով, ընտրություններին մասնակցելու համար գրանցում է անցել 26 քաղաքական կազմակերպություն, եւս վեցի գրանցումը մերժվել է: Ներկայում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընթանում է ընտրադաշինքների գրանցումը:

Նշենք, որ հունիսի 15-ին տեղական ընտրությունների արդյունքում կընտրվեն 71 մունիցիպալիտետների սակրեբուլոներ, որոնցում կընդգրկվի 2088 մարդ: Ուղղակի ընտրությունների միջոցով կընտրվեն նաեւ 12 ինքնակառավարվող քաղաքների քաղաքապետեր եւ մունիցիպալիտետների վարչության 59 նախագահներ (գամգեբելիներ):

Վերջին անգամ Վրաստանում տեղական ընտրություններն անցկացվել են 2010 թվականին, երբ տեղական սակրեբուլոներում տեղերի ճնշող մեծամասնությունն ստացան այդ ժամանակաշրջանում կառավարող «Միասնական ազգային շարժում» կուսակցության ներկայացուցիչները, որոնք երկու տարի հետո կայացած խորհրդարանական ընտրություններում դիրքերը զիջեցին «Վրացական երազանք» կոալիցիային: Վրաստանում 2013 թվականի նախագահական ընտրություններում նույնպես հաղթեց «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչ Գիորգի Մարգվելաշվիլին:

«ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ» ԶՐԿՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ «5» ՀԱՄԱՐԻՑ

Հունիսի 15-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրություններում «Միասնական ազգային շարժումը» քվեաթերթիկներում չի ներկայացվի «5» համարի տակ:

Նշենք, որ Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, «Միասնական ազգային շարժման» կողմից «Քրիստոնեա-ժողովրդավարական» կուսակցության հետ ընտրական դաշինքի ձեւավորման կապակցությամբ, մայիսի 5-ին «Ազգայիններին» զրկեց «5» համարի տակ հանդես գալու իրավունքից:

Տեղի ունեցածի կապակցությամբ, «Միասնական ազգային շարժումը» հանդես է եկել հայտարարությամբ, որ մտադիր է դատարանում բողոքարկել ԿԸՀ-ի վերոնշյալ որոշումը:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Վրաստանի կառավարությունը ծեռնամուխ է եղել դատավարական պայմանավորվածությունների ինստիտուտի բարեփոխմանը:

Պատժամիջոցի համաձայնեցումը որպես դատավարական համաձայնեցման տարբերակ, վերացվում է: Դատավարական պայմանավորվածության ինստիտուտի կապակցությամբ, քրեական դատավարական օրենսգրքի այս եւ մյուս ծրագրված փոփոխությունները մշակել է Արդադարադատության նախարարությունը եւ ներկայացրել խորհրդարանի քննարկմանը: Համաձայն փոփոխության, դատավարական պայմանավորվածության հիմք է լինելու միայն մեղադրանքի պայմանավորվածությունը, ըստ որի մեղադրյալը խոստովանում է կատարած իրավախախտումը եւ համաձայնվում պատժամիջոցի հետ: Օրինանախագծով նախատեսված է, որ դատավարական պայմանավորվածության պայման կարող է լինել հետաքննության հետ համագործակցությունը կամ տրված վնասի փոխհատուցումը:

Օրենքում ներառվում են նոր գործոններ, որոնք դատախազությունը նկատի է առնելու դատավարական պայմանավորվածության ձեւակերպման ժամանակ: Ներկա դրությամբ, քրեական իրավունքի դատավարական օրենսգրքով այդ գործոնները հետեւյալն են՝ կատարած հանցագործության համար նախատեսված պատժաժամկետը, կատարած հանցագործության ծանրությունը: Ըստ նախագծի, նման որոշումն ընդունելուց առաջ դատախազը պետք է հաշվի առնի պետության իրավական առաջնահերթությունները, կատարած հանցագործության եւ հնարավոր պատժատեսակի ծանրությունը, հասարակության համար մեղադրյալի վտանգի մակարդակը, իրավախախտման բնույթը, մեղադրյալի անձնական բնութագիրը, հետաքննության հետ համագործակցությունը, հասցրած վնասի փոխհատուցման հարցում մեղադրյալի դիրքորոշումը:

Նորամուծություն է նաեւ դատավարական պայմանավորվածության արձանագրության օրենսդրական կարգավորումը: Արձանագրությունում պետք է ներկայացվի մեղադրյալի եւ դատախազի միջեւ բանակցությունների մանրամասները: Այն ժամանակին եւ լրիվությամբ պետք է մատչելի լինի պաշտպանվող կողմին, այն ուղեկցվելու է դատարանին ներկայացված միջնորդագրով: Մեղադրյալի համաձայնության երաշխիքը օրինանախագիծը նախատեսում է այն, որ դատարանը ստուգելու է, թե որքանով է մեղադրյալը տեղեկացված դատավարական պայմանավորվածության պայմանների մասին:

Դատավարական պայմանավորվածության ձեւակերպման գործընթացում աճում են տուժյալ կողմի իրավունքները: Ներկա դրությամբ, դատավարական պայմանավորվածության ձեւակերպման ժամանակ դատախազը պարտավոր է խորհրդատվություն անցկացնել տուժյալի հետ եւ նրան տեղեկացնել դատավարական պայմանավորվածության ձեւակերպման մասին: Թեպետ այն դեպքում, եթե խորհրդատվությունների արդյունքում դատախազը հաշվի չի առնում տուժյալի շահերը կամ դատավարական պայմանավորվածությամբ նվազ պատժամիջոց է պահանջում մեղադրյալի համար, տուժյալն այն բողոքարկելու իրավունք չունի: Նոր օրինանախագծով տուժյալ կողմին տրվում է դատավարական պայմանավորվածության հաստատման միջնորդագրի քննարկմանը մասնակցելու եւ իր կարծիքը հայտնելու իրավունք: Միաժամանակ, եթե տուժյալը չի կարող կամ չի ցանկանում մասնակցել դատավարությանը, նա կարող է իր նկատառումները դատավարական պայմանավորվածության մասին դատարանին առաքել գրավոր տեսքով:

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հաստատեց քրեական իրավունքի համակարգի բարեփոխումների միջգերատեսչական համակարգող խորհրդի կազմը եւ հիմնադրույթը:

Ինչպես ասված է հրամանագրում, քրեական իրավունքի համակարգի բարեփոխման ռազմավարության մշակման, դրա իրականացման, միջգերատեսչական աշխատանքների համակարգման, ինչպես նաեւ համապատասխան հանձնարարականների ու առաջարկությունների մշակման նպատակով խորհուրդը հիմնվում է Վրաստանի արդարադատության նախարարությանն առընթեր: Խորհրդի նախագահներն են Վրաստանի արդարադատության եւ քրեակատարողական նախարարները, համանախագահները՝ արդարադատության առաջին փոխնախարարը, գլխավոր դատախազի տեղակալը, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարարը, ՆԳ փոխնախարարը: Խորհրդի կազմում են կրթության փոխնախարարը, կառավարության խորհրդարանական քարտուղարը, արդարադատության նախարարության օրենքների մշակման դեպարտամենտի ղեկավարը, նույն նախարարության վերլուծաբանական դեպարտամենտի ղեկավարը, խորհրդի քարտուղարը, իրավախախտումների կանխման կենտրոնի տնօրենը, իրավաբանական հարցերով խորհրդարանական կոմիտեի նախագահը, առաջին փոխնախագահը եւ Վրաստանի Գերագույն դատարանի նախագահը, քրեական գործերով պալատի նախագահը, քրեակատարողական եւ պրոբացիայի նախարարության ներկայացուցիչները, արդարադատության բարձրագույն խորհրդի նախագահը եւ Վրաստանի ժողովրդական պաշտպանը:

Տեղի ոչ կառավարական կազմակերպությունների հետ միասին, խորհրդի աշխատանքում կներգրավվեն նաեւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Եվրամիության պատվիրակության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչները, ինչպես նաեւ՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի խորհրդականը, Վրաստանում ԱՄՆ-ի իրավաբանների ասոցիացիայի օրենքի գերակայության նախաձեռնության ծրագրի տնօրենը:

ՆԱԽԱԳԻԾ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՈՄՍԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ Է

Հաշվի առնելով ֆերմերների պահանջներն ու ստեղծված իրավիճակը, Վրաստանի կառավարությունը մինչեւ 2014 թվականի նոյեմբերի 1-ը երկարաձգեց գյուղատնտեսական տոմսակների կիրարկման ժամկետը:

Այսպիսով, «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գարնանային աշխատանքների աջակցության» նախագծում ընդգրկված ցանկացած ֆերմեր, ով զբաղվում է աշնանացան մշակաբույսերի արտադրությամբ, կարող է տոմսակից օգտվել աշնանը:

Նշենք, որ վերոնշյալ նախագիծը հաջողությամբ է իրականացվում Վրաստանի բոլոր տարածաշրջաններում: Դրա շրջանակներում՝ գյուղատնտեսական տոմսակներ տրվեցին 472 հազարից ավելի սակավահող ֆերմերների: Ներկա դրությամբ, արդեն հերկվել է 69263 հեկտար հող, որից 50930 հեկտարը մշակվել է «Մեխանիզատոր» ՍՊԸ-ի կողմից:

Անցյալ տարվա համեմատությամբ, այս տարի նախագծում ներգրավված ֆերմերների թիվը զգալիորեն ավելացել է: Ինչպես նշեցին նախարարությունում, այս տարի մշակվել են այնպիսի հողատարածքներ, որոնք տարիներ շարունակ մնում էին անմշակ: Ավելացնենք, որ հերկման աշխատանքները, ներկա դրությամբ, իրականացվում են Վրաստանի ողջ մասշտաբով:

Այս տարի սակավահող ֆերմերներն իրենց տնօրինության տակ ստանում են երկու տեսակի տոմսակներ՝ գյուղատնտեսական եւ բանկային պլաստիկ տոմսակներ, այսպես կոչված, «Ագրոտոմսակներ»: «Ագրոտոմսակում» հաշվառված միավորներով նրանք երկրի մասշտաբով գործող 800-ից ավելի գյուղատնտեսական խանութներից կարող են գնել պարարտանյութ, սերմնանյութ եւ բույսերի պաշտպանության միջոցներ: «Ագրոտոմսակները» ֆերմերները կարող են ստանալ «Լիբերթի» բանկի ցանկացած մասնաճյուղում:

Գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության տեղեկատվությամբ, ագրոտոմսակ է ստացել 382484 սակավահող ֆերմեր, իսկ կանխիկացված միավորների գումարը կազմել է 7,6 միլիոն լարի: Ներկա դրությամբ, տոմսակում հաշվառված միավորների օգտագործմամբ, մոտ 140 հազար ֆերմեր արդեն ձեռք է բերել անհրաժեշտ պարարտանյութը, սերմնանյութն ու բույսերի պաշտպանության միջոցները:

Նշենք, որ նախագծի շրջանակներում տրվող «Ագրոտոմսակը» սովորական բանկային փաստաթուղթ է, տասամյա ժամկետով, եւ այն ֆերմերները կարող են օգտագործել առօրյա գործունեությունում: «Ագրոտոմսակի» սպասարկումից ֆերմերները կարող են օգտվել մինչեւ սեպտեմբերի 1-ը:

Ի տարբերություն նախորդ տարիների, 2014 թվականին վերոնշյալ նախագծում գյուղատնտեսության նախարարությունը ներգրավել է նաեւ Թբիլիսիի շրջակայքի 4660 ֆերմերի, որոնց տրվող օգնությունն ընդհանուր առմամբ կազմել է 318150 լարի:

Հիշեցնենք, որ «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գարնանային աշխատանքների աջակցության» նախագիծն արդեն երկրորդ տարին է, ինչ իրականացվում է: Այն եռամյա է ու կավարտվի 2015 թվականին: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ նախագծի շրջանակներում պետության ցուցաբերած օգնությունից կարող է օգտվել ավելի քան 800 հազար ֆերմեր:

Նշենք, որ միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) ուսումնասիրությունների համաձայն, գյուղատնտեսական տոմսակների բաժանումը կառավարության մեծ նվաճումն է:

Էջը պատրաստեց
ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ